Գործ թիվ ԵԴ2/1022/02/26

Քաղվածք

ՎՃԻՌ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

02.06.2026թ. քաղ. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ Դատարան), հետևյալ կազմով՝

նախագահությամբ՝ դատավոր Դ. ՕՀԱՆՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի «Յունիքիմ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 02242529, պետական գրանցման համար՝ 269.110.03375, հասցե՝ ք. Երևան, Արտաշատի 1-ին խճուղի, շենք 11) ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ (ՀՎՀՀ՝ 02522157, պետական գրանցման համար՝ 282.184.1114333, հասցե՝ ք. Երևան, Բագևանդի փողոց, շենք 5) «Յունիքիմ» ՍՊԸ թիվ 3 արձանագրության 2.4–րդ կետի 2–րդ պարբերությամբ («Յունիքիմ» ՍՊԸ–ի հայտում արձանագրված անհամապատասխանությունների մասով) կայացված որոշումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք 16.01.2026 թվականի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության 2.4-րդ կետի վերջին պարբերությամբ («Յունիքիմ» ՍՊԸ–ի հայտը մերժելու մասով) կայացված որոշումը, ինչպես նաև 16.01.2026 թվականի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության 4–րդ բաժնի 4.2 կետի վերջին պարբերությամբ կայացված որոշումը) գնման ընթացակարգը չկայացած ճանաչելու մասով անվավեր ճանաչելու պահանջների մասին,

ՎՃՌԵՑ

1. «Յունիքիմ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ «Յունիքիմ» ՍՊԸ թիվ 3 արձանագրության 2.4–րդ կետի 2–րդ պարբերությամբ («Յունիքիմ» ՍՊԸ–ի հայտում արձանագրված անհամապատասխանությունների մասով) կայացված որոշումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք 16.01.2026 թվականի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության 2.4-րդ կետի վերջին պարբերությամբ («Յունիքիմ» ՍՊԸ–ի հայտը մերժելու մասով) կայացված որոշումը, ինչպես նաև 16.01.2026 թվականի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության 4–րդ բաժնի 4.2 կետի վերջին պարբերությամբ կայացված որոշումը) գնման ընթացակարգը չկայացած ճանաչելու մասով անվավեր ճանաչելու պահանջների մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված։

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ

Ստորագրող
ԴԱՎԻԹ ՕՀԱՆՅԱՆ
2914920504
2026-06-04 18:09:20 GMT+04:00
Հաստատված է ԷԿԵՆԱԳ-ի կողմից

Դ. ՕՀԱՆՅԱՆ